

**ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՅՊԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՎԱՐՉԱԿԱՆ ՈՒ ՔՐԵԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ
/տույժեր, տուգանքներ/**

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՅՅ օրենսգրքի համաձայն՝ վարչական իրավախախտում (զանցանք) է համարվում պետական կամ հասարակական կարգի, պետական սեփականության, քաղաքացիների իրավունքների և ազատությունների, կառավարման սահմանված կարգի դեմ ոտնձգվող հակաիրավական, մեղավոր (դիտավորյալ կամ անզգույշ) այնպիսի գործողությունը կամ անգործությունը, որի համար օրենսդրությամբ նախատեսված է վարչական պատասխանատվություն: Վարչական իրավախախտումը համարվում է դիտավորությամբ կատարված, եթե այն կատարող անձը գիտակցել է իր գործողության կամ անգործության հակաիրավական բնույթը, կանխատեսել է դրա վնասակար հետևանքները և ցանկացել դրանք, կամ գիտակցաբար թույլ է տվել այդ հետևանքների առաջացումը, իսկ անզգուշությամբ կատարված է համարվում, եթե այն կատարած անձը կանխատեսել է իր գործողության կամ անգործության վնասակար հետևանքների առաջացման հնարավորությունը, բայց թեթևամտորեն հույս է ունեցել կանխելու դրանք կամ չի կանխատեսել այդպիսի հետևանքներ առաջանալու հնարավորությունները, թեև պարտավոր էր ու կարող էր կանխատեսել դրանք:

Բնապահպանության ոլորտում վարչական իրավախախտումներ կատարելու համար հիմնականում կիրառվում են հետևյալ վարչական տույժերը՝ նախազգուշացում, տուգանք, վարչական իրավախախտում կատարելու գործիք կամ անմիջական օբյեկտ հանդիսազող առարկայի հատուցմամբ վերզնում կամ բռնագրավում, քաղաքացուն տրված հատուկ իրավունքից (տրանսպորտային միջոցներ վարելու իրավունք, որսորդության իրավունք) զրկում:

Վարչական իրավախախտման համար տույժը նշանակվում է՝ կատարված իրավախախտման համար պատասխանատվություն նախատեսող ՅՅ օրենսդրությամբ: Տույժ նշանակելիս հաշվի են առնվում կատարված իրավախախտման բնույթը, խախտողի անձը, նրա մեղքի աստիճանը, զույքային դրությունը, պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները: Պատասխանատվությունը մեղմացնող հանգամանքներ են համարվում՝ մեղավորի անկեղծ զղջումը, իրավախախտման վնասակար հետևանքները մեղավորի կողմից կանխելը, պատճառած վնասը կամավոր հատուցելը կամ վերացնելը, իրավախախտում կատարելը հոգեկան խիստ հուզմունքի ազդեցության տակ կամ էլ անձնական կամ ընտանեկան ծանր հանգամանքների զուգադիպությամբ, իրավախախտում կատարելը անչափահասի, հղի կնոջ կամ մինչեւ մեկ տարեկան երեխա ունեցող կնոջ կողմից, իսկ ծանրացնող հանգամանքներ են համարվում՝ հակաիրավական վարքագիծը շարունակելը, չնայած այն դադարեցնելու մասին դրա համար լիազորված անձանց պահանջին, մեկ տարվա ընթացքում կրկին անգամ նման իրավախախտում կատարելը, որի համար անձն արդեն ենթարկվել է վարչական տույժի, իրավախախտում կատարելը նախկինում հանցագործություն կատարած անձի կողմից, անչափահասին իրավախախտման մեջ ներգրավելը, իրավախախտումը մի խումբ անձանց կողմից կատարելը, իրավախախտումը տարերային աղետի պայմաններում կամ այլ արտակարգ հանգամանքներում կատարելը, իրավախախտումը հարբած վիճակում կատարելը:

Կենսառեսուրսների օգտագործման ընթացքում հիմնականում կատարվող վարչական իրավախախտումներն ու դրանց համար սահմանված սանկցիաները կիրառվում են սահմանված նվազագույն աշխատավարձի (1000 դրամ) հաշվարկով՝ հետևյալ խախտումների համար.

Հողի բերրի շերտի օգտագործման կարգը խախտելը, որն առաջացնում է տուգանքի նշանակում քաղաքացիների նկատմամբ՝ 30-ապատիկի չափով, իսկ պաշտոնատար անձանց նկատմամբ՝ 50- ապատիկի չափով:

Անտառահատման ֆոնդի օգտագործման, բնափայտի մթերման ու դուրսբերման և հեշի մթերման սահմանված կարգը խախտելը, անտառային տարածքներում, ինչպես նաև անտառային ֆոնդի մեջ չմտնող տարածքներում կամ հատումներն արգելված ծառերը, թփերը հատելը կամ ոչնչացնելը, պետական կամ մասնավոր սեփականություն հանդիսացող բուսածածկը ոչնչացնելը կամ մինչև աճի դադարեցման աստիճանի վնասելը, անտառօգտագործման իրավունք տվող փաստաթղթերով նախատեսված նպատակներին կամ պահանջներին չհամապատասխանող անտառօգտագործումը, որն առաջացնում է տուգանքի նշանակում քաղաքացիների նկատմամբ՝ 50-100-ապատիկի չափով, իսկ պաշտոնատար անձանց նկատմամբ՝ 150-200-ապատիկի չափով:

Պետական անտառային հողերում խոտհարքները և արոտահանդակները վնասելը, անտառներում եւ պետական անտառային ֆոնդի ոչ անտառապատ հողերում ինքնակամ խոտհունձ կատարելն ու անասուններ արածեցնելը և (կամ) դրանց կանոնները խախտելը, անտառի կենդանական աշխարհին վնաս հասցնելը, որսի կանոնները կոպիտ խախտելը (որսը առանց դրա թույլտվության կամ արգելված վայրերում, կամ արգելված ժամանակ, կամ արգելված գործիքներով կամ եղանակներով), ինչպես նաև որսի մյուս կանոնները պարբերաբար խախտելը, որն առաջացնում է տուգանքի նշանակում քաղաքացիների նկատմամբ՝ 50-80-ապատիկի չափով, իսկ պաշտոնատար անձանց նկատմամբ՝ 100-150-ապատիկի չափով:

Ինքնագլուխ վայրի պտուղներ, ընկույզ, սունկ, հատապտուղ և այլն հավաքելն այն անտառամասերում, որտեղ դա արգելված է կամ թույլատրվում է միայն անտառատններով՝ առաջացնում է տուգանքի նշանակում քաղաքացիների նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի չափով, իսկ պաշտոնատար անձանց նկատմամբ՝ 20-ապատիկի չափով:

Սահմանված ժամկետների և եղանակների խախտմամբ վայրի պտուղներ, ընկույզ, հատապտուղ և այլն հավաքելը՝ առաջացնում է նախազգուշացում կամ տուգանքի նշանակում քաղաքացիների նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի չափով, իսկ պաշտոնատար անձանց նկատմամբ՝ 10-ապատիկի չափով:

Անտառները կենցաղային մնացուկներով և թափոններով աղտոտելը, հրդեհային անվտանգության պահանջները խախտելը, բույսերի պաշտպանության միջոցները, դրանց աճի խթանիչները, հանքային պարարտանյութերը և մյուս պատրաստուկները փոխադրելու, պահելու և կիրառելու կանոնները խախտելը, որը վնաս է հասցրել կենդանական աշխարհին՝ առաջացնում է տուգանքի նշանակում քաղաքացիների նկատմամբ՝ 50-ապատիկի չափով, իսկ պաշտոնատար անձանց նկատմամբ՝ 100-ապատիկի չափով:

Անտառներում սահմանափակող անտառչինական և այլ նշանները ոչնչացնելը կամ վնասելը, կրակի հետ անփույթ վարվելու հետևանքով անտառը ոչնչացնելը կամ վնասելը, անտառներում հրդեհային անվտանգության կանոնները խախտելը, որի հետևանքով անտառը հրդեհվել է կամ հրդեհը տարածվել է զգալի մակերեսի վրա՝ ՀՀ Կարմիր գրքում գրանցված հազվագյուտ եւ անհետացող կենդանիների տեսակները, դրանց բնակատեղերը, ձվադրման վայրերը և ձվերը, միգրացիոն ուղիները, բները և այլ շինվածքները ոչնչացնելը կամ այլ գործողություններ կատարելը, որոնք կարող են առաջացնել կամ առաջացրել են այդպիսի կենդանիների թվակազմի անկում, կրճատում կամ բնակության միգրացիայի խախտում, կամ էլ բացառիկ դեպքերում թույլատրված որսի պայմանների խախտմամբ դրանք որսալը, ՀՀ կարմիր գրքում գրանցված բույսերը, կամ այդպիսի բույսերի արմատները, ծաղիկները, պտուղները ինքնագլուխ հավաքելը; հատուկ պահպանվող բնական օբյեկտների պահպանական ռեժիմն ու արգելոցների, արգելավայրերի, անտառագոտիների, ազգային և բնական զբոսայգիների ներքին կարգի կանոնները խախտելը, կամ էլ բնության պահպանվող օբյեկտները ոչնչացնելը կամ վնասելը, արգելոցներում և հատուկ պահպանվող մյուս տարածքներում կենդանական աշխարհից

օգտվելու սահմանված կարգը խախտելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում քաղաքացիների նկատմամբ՝ 80-ապատիկի չափով, իսկ պաշտոնատար անձանց նկատմամբ՝ 150-ապատիկի չափով:

Կենդանական, այդ թվում՝ ձկան պաշարների պահպանության, որսի եւ ձկնորսության, կենդանական աշխարհից օգտվելու մյուս տեսակների որսի իրականացման կանոնները խախտելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում քաղաքացիների նկատմամբ՝ 30-50-ապատիկի չափով, իսկ պաշտոնատար անձանց նկատմամբ՝ 50-100-ապատիկի չափով՝ խախտողի անձնական սեփականություն հանդիսացող հրացանների և որսորդական միջոցների, հիշյալ խախտումները կատարելու գործիք համարվող մյուս առարկաների ու կենդանիների բռնագրավմամբ:

Առանց թույլտվության կամ արգելված ժամանակ, կամ չթույլատրված վայրերում կամ չթույլատրված գործիքներով, եղանակներով ու ձևերով գետերում, լճերում, ջրամբարներում և այլ ջրադրյուններում ձկան, գազանների և ջրային այլ կենդանիների որսով զբաղվելը, եթե հասցված վնասը չի գերազանցում սահմանված նվազագույն աշխատավարձի եռապատիկը՝ առաջացնում է տուգանքի նշանակում քաղաքացիների նկատմամբ՝ 30-50-ապատիկի չափով, իսկ պաշտոնատար անձանց նկատմամբ՝ 80-100-ապատիկի չափով՝ որսի միջոցով ձեռք բերվածի որսի, որսի գործիքների, լողունակ միջոցների և դրանց բոլոր այն պատկանելիքների բռնագրավմամբ, որոնք խախտումներ կատարելու գործիք են դարձել:

ՀՀ քրեական օրենսգրքով քրեական պատասխանատվության միակ հիմքը հանցանք, այսինքն՝ այնպիսի արարք կատարելն է, որն իր մեջ պարունակում է քրեական օրենքով նախատեսված հանցակազմի բոլոր հատկանիշները: Անձը ենթակա է քրեական պատասխանատվության միայն անձամբ իր կատարած հանցանքի համար:

Պատիժը պետական հարկադրանքի միջոց է, որը դատարանի դատավճռով պետության անունից նշանակվում է հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ և արտահայտվում է այդ անձին իրավունքներից ու ազատություններից օրենքով նախատեսված զրկմամբ կամ դրանց սահմանափակմամբ:

Պատժի տեսակներն են՝ տուգանքը (դրամական տուժանք, որը սահմանվում է պատիժ նշանակելու պահին ՀՀ օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի 30-1000-ապատիկի չափով), որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու հրավումբից զրկելը, գույքի բռնագրավումը (դատապարտյալի սեփականությունը համարվող գույքը կամ դրա մի մասը հարկադրաբար և անհատույց վերցնելը՝ ի սեփականություն պետության), ուղղիչ աշխատանքները (նշանակվում են 2 ամսից 2 տարի ժամկետով և դատապարտյալը, դատարանի դատավճռում տրված ցուցումի համաձայն, դրանք կրում է կամ իր աշխատանքի վայրում, կամ ուղղիչ աշխատանքները տնօրինող մարմինների նշանակմամբ՝ դատապարտյալի բնակության շրջանի այլ վայրերում), կալանքը (ուղղիչ հիմնարկում անազատության մեջ պահելու ձևով հասարակությունից խիստ մեկուսացման պայմաններում դատապարտյալին պահել), ազատագրվումը որոշակի ժամկետով (դատապարտյալին ուղղիչ հիմնարկում անազատության մեջ պահելու ձևով հասարակությունից, 3 ամսից 15 տարի ժամկետով մեկուսացնել):

Կենսառեսուրսների օգտագործման հետ կապված հանցատեսակներն ու դրանց կատարման համար պատասխանատվության միջոցները սահմանված են օրենսգրքի 292-298 հոդվածներով: Օրենսգրքի համաձայն՝ հանցատեսակներ են համարվում՝ ձկներ կամ ջրային այլ կենդանիներ կամ արդյունագործական ջրային բույսեր ապօրինի արդյունահանելը, եթե այդ արարքները խոշոր վնաս են պատճառել, կատարվել են դրանց զանգվածային ոչնչացման եղանակների օգտագործմամբ կամ կատարվել են ձվադրման վայրերում կամ միգրացիայի ուղիներում կամ ձվադրման ընթացքում, ինչպես նաև նույն արարքները որոնք կատարվել են պաշտոնական դիրքն օգտագործելով կամ մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ, ձկնային պաշարների պահպանության կանոնների խախտմամբ փայտեղենի լաստառաքումը, կամուրջների, ամբարտակների

շինարարությունը, փայտեղենի կամ անտառային այլ արտադրանքի փոխադրումը, պայթեցման կամ այլ աշխատանքների իրականացումը, ինչպես նաև ջրամբարող (ջրահավաք) շինությունների և պոմպային մեխանիզմների շահագործումը, որոնք դիտավորությամբ կամ անզգուշությամբ առաջացրել են ձկների կամ ջրային այլ կենդանիների զանգվածային ոչնչացում, կերային պաշարների էական չափերի ոչնչացում կամ այլ ծանր հետեւանքներ, ապօրինի որսը, որը պատճառել է խոշոր վնաս, կատարվել է մեխանիկական տրանսպորտային միջոցի կամ օդանավի, պայթուցիկ նյութերի, գազերի օգտագործմամբ կամ թռչունների և գազանների զանգվածային վնասման այլ եղանակներով, կատարվել է այնպիսի թռչունների և վայրի կենդանիների նկատմամբ, որոնց որսն ամբողջովին արգելված է, կատարվել է բնության հատուկ պահպանվող տարածքներում, ինչպես նաև պաշտոնական դիրքն օգտագործելով կամ մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ; Կարմիր գրքում գրանցված օրգանիզմները կամ դրանց բնակության վայրերը ոչնչացնելը, որը դիտավորությամբ կամ անզգուշությամբ առաջացրել է այդ օրգանիզմների ամբողջական պոպուլյացիաների բնաջնջում (մահ), անտառային տարածքներում, ինչպես նաև դրանցից դուրս տարածքներում կամ հատումներն արգելված ծառերը, թփերը հատելը կամ ոչնչացնելը, պետական կամ մասնավոր սեփականություն համարվող բուսածածկը ոչնչացնելը կամ մինչև աճի դադարեցման աստիճանը դրանց վնասելը, եթե այդ գործողությունները զգալի վնաս են պատճառել; կրակի, պայթուցիկ նյութերի կամ առավել վտանգի այլ աղբյուրի հետ անզգուշ վերաբերմունքի արդյունքում անտառները, ինչպես նաև անտառային ֆոնդի մեջ չմտնող տնկարկները ոչնչացնելը կամ վնասելը, որոնք խոշոր վնաս են պատճառել, արգելոցների, արգելավայրերի, ազգային պարկերի, բնության հուշարձանների և պետության կողմից հատուկ պահպանվող բնական այլ տարածքների կամ օբյեկտների ռեժիմը խախտելը, որը դիտավորությամբ կամ անզգուշությամբ էական վնաս է առաջացրել:

Արթուր Համբարձումյան
ՀՀ բնապահպանության նախարարության
իրավաբանական վարչության պետ

Հրատարակվում է Բնական պաշարների կառավարման և
չքավորության նվազեցման ծրագրի շրջանակում



«Աջակցություն բարեփոխումներին» ՀԿ
www.reforms.am

տպաքանակը՝ 5 000